Մասշտաբ 1:200 000

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

Մարզկենտրոնը՝
ք. Արտաշատ

Տարածաշրջանները՝
Արարատ, Արտաշատ և Մասիս

Քաղաքները՝
Արտաշատ, Արարատ, Վեդի և Մասիս

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Արարատի մարզն իր մեջ ընդգրկում է Արարատի, Արտաշատի և Մասիսի տարածաշրջանները՝ 97 համայնքներով՝ (4-ը քաղաքային և 93-ը գյուղական): Մարզն ունի շուրջ 260.1 հազար բնակչություն, որից 73.5 հազ. քաղաքաբնակներ են (28,2%), 186.6 հազարը՝ գյուղաբնակ (71,7%):

Մարզում 2014թ. ընթացքում թողարկվել է 134 մլրդ 309.9 մլն դրամի (ընթացիկ գներով) արդյունաբերական արտադրանք, նախորդ տարվա 123 մլրդ 593.8 մլն դրամի դիմաց: Այն կազմել է Հանրապետությունում արտադրված արտադրանքի 10.4%-ը (2013թ. համեմատ մարզում ավելի է արտադրվել 10 մլրդ 700.0 մլն դրամի արտադրանք): Ընդհանուր առմամբ վերջին հինգ տարիների ընթացքում մարզում արտադրված արդյունաբերական արտադրանքը կազմել է հանրապետությունում արտադրված արդյունաբերական արտադրանքի 8.1-10.4%-ը*:*

2014թ-ի ընթացքում մարզում թողարկվել է 10,700.0 մլն դրամի ավել արդյունաբերական արտադրանք՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 123,600 մլրդ դրամի փոխարեն կազմելով 134,309 մլրդ դրամ: Արդյունաբերական արտադրանքի ինդեքսը կազմել է 112.2, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 2.7%-ով:

Արդյունաբերական արտադրանքի իրացման ծավալները 2014թ կազմել է 149 մլրդ 176,3 մլն դրամ:

Արտադրանքի ծավալները համադրելի գներով համեմատելիս արձանագրվել է աճ՝ 9,986.4 մլն դրամի չափով: Աճ է գրանցվել մշակող արդյունաբերության (շուրջ 3,034.8 մլն դրամ), էլեկտրա-կանության արտադրության (շուրջ 1,967.5 մլն դրամ), ջրամատակարարման (շուրջ 58.7 մլն դրամ) ոլորտներում և նվազում է արձանագրվել հանքագործական արդյունաբերության ոլորտում՝ շուրջ 74.6 մլն դրամ:

Բոլոր աղբյուրներով մարզում 2014թ-ի ընթացքում իրականացվել են 15 մլրդ 754.9 մլն դրամի (ընթացիկ գներով) կապիտալ ներդրումներ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 16 մլրդ 291.6 մլն դրամի համեմատ և կազմել է հանրապետությունում տարվա ընթացքում իրականացված կապիտալ ներդրումների 3.6%-ը:

2014 թվականին մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը կազմել է 141 մլրդ 500 մլն դրամ, որը կազմել է հանրապետության գյուղատնտեսության արտադրանքի համախառն ծավալի 14.8%-ը, իսկ նախորդ՝ 2013թ. համապատասխան ցուցանիշից աճել է 3.6%-.ով կամ 5,1 մլրդ դրամով:

1.1. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

2014թ.-ին պետական բյուջեից մարզպետարանին և մարզային ենթակայության կազմակերպություններին տրված ֆինանսավորման ամբողջ գումարը կազմել է շուրջ 6 մլրդ. 616մլն 980.9 հազ. դրամ:

Ֆինանսավորման ոլորտը	2013թ. գումարը /հազ.դրամ/	2014թ. գումարը /հազ.դրամ/	2015թ. նախատեսված /հազ.դրամ/
ՀՀ Արարատի մարզպետարան	269573.1	372302.7	476222.4
Կառավ. մարմինների կարողությունների զարգացում	9245.9		3000.0
Կրթություն, այդ թվում			
-Հանրակրթական ուսուցում	5525131.6	5861564.0	6206701.5
-Ներառական կրթություն	27244.0	33677.4	45050.8
-Նախադպրոցական կրթություն	38756.5	51041.4	70974.9
Սոց.անապ.ընտ. երեխ-ին դասագրքերի վարձավճարների փոխհատուցում		10149.9	10216.1
-Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների գծով ուսուցման վարձավճարի փոխհատուցում	14051.5	21365.5	29341.0
- Կրթական հիմնարկների հիմնանորոգում	146965.0	259940.4	219948.8
- Մշակույթ՝ այդ թվում			
Թանգարաններ	14204.5	16088.3	17569.3
Մշակութային միջոցառումներ	3 195,4	3195.4	3195.4
ՀՀ կառավ. Պահուստային ֆոնդից /այլ ընտրանքային ծառայություն	1183652.6	227035.8	1080.0
Մշակութային օբյեկ.հիմնանորգում			50000.0
Ավտոճանապարհների ձմեռային պահպանում և շահագործում	34947.0	20560.4	37400.0
Ընդամենը	**7266967.1**	**6876921.3**	**7171700.2**
Դոտացիա	3401684.7	3707401.1	4207067.3
Դրամաշնորհ համայնքներին		170365.5	

Մարզի համայնքների բյուջեներով եկամտային մասը 2014 թվականին կազմել է 5 մլրդ 588 մլն 879.7հազ. դրամի, որի կատարողականը կազմել է 100.8%, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 100.9%-ի փոխարեն, իսկ գումարային արտահայտությամբ աճը կազմել է 429877.8.0 հազ. դրամ:

1.2 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2014 թվականին մարզում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կրթության և մշակույթի բնագավառներում իրականացվել է 330.0 մլն դրամի շինարարական աշխատանքներ: Եվս 25 մլն դրամի աշխատանքներ են իրականացվել Հայաստանի սոցիալական ներդրումներ հիմնադրամի կողմից /Պարույր Սևակի տուն թանգարանի հիմնանորոգում/: ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից

19.03.2014թ. ՀՀ կառավարության թիվ 363-Ն և 10.04.2014թ. թին 532-Ն որոշումներով ՀՀ Արարատի մարզին հատկացվել է 682.5 մլն դրամ գումար՝ մարզում հրատապ հանդիսացող խնդիրների լուծման նպատակով:

Արարատի մարզում 6 համայնքներ գտնվում են սողանքային գոտում: Վերջին տարիներին սողանքը մեծ վնաս է հասցրել մարզի բնակֆոնդին և ինժեներատեխնիկական կառուցվածքներին: Ուրցալանջ, Զանգակատուն, Լանջառ համայնքում մի շարք բնակելի տներ գտնվում են վթարային վիճակում և փլուզման եզրին են, անհրաժեշտ է հրատապ տարահանել բնակիչներին և լուծել նրանց բնակարանով ապահովելու խնդիրը, որից հետո ձեռնարկել միջոցառումներ սողանաքների հետևանքները վերացնելու ուղղությամբ:

ՀՀ Նախագահի 2008թ. հուլիսի 30-ի թիվ ՆԿ-128-Ա կարգադրությամբ հաստատված ժամանակացույցով նախատեսվել է 24 ծրագրերի իրականացում, չի իրականացվել 6 ծրագիր՝ Արարատ և Արտաշատ քաղաքներում բազմաբնակարան շենքերի/թվով 64 բնակարան/ կառուցում,Արարատի տարածաշրջանում մաքրման կայանի կառուցում, Ռանչպար և Արբաթ գյուղերի գազաֆիկացում և Որցաձոր-Կարմրաշեն ճանապարհի հիմնանորոգում: Այդ ծրագրերը ներառված են 2015-2017թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերում:

1.3. ԲՆԱԿԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Արարատի մարզի 4 քաղաքներում (Արարատ, Արտաշատ, Մասիս, Վեդի) առկա են 439 բազմաբնակարան շենքեր, 16,637 բնակարաններով, 949.6 հազ.քառ.մ ընդհանուր մակերեսով: ՀՀ պետական ռեգիստրի տվյալներով մարզում գրանցված են 2 համատիրություններ, որոնք կառավարում են 7 շենք (2.8 %), 17,245 (2%)՝ բնակարաններով: <u>Անհրաժեշտ է ակտիվորեն շարունակել մարզում բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների ստեղծման գործընթացը:</u>

01.01.2015թ. դրությամբ գազաֆիկացված են 84 համայնքներ, որոնցից 4 քաղաքային և 80 գյուղական: Գազաֆիկացված են 45,832 բնակարաններ, որոնցից 10625-ը բազմաբնակարան շենքերում և 35207-ը՝ առանձնատներում: Ըստ տարածաշրջանների՝

Տարածաշրջանը	Ընդ. բաժանորդ	Այդ թվում	
		ԲԲՇ	Առանձնատուն
Արարատ Վեդի	13103	3802	9301
Արտաշատ Մասիս	32729	6823	25906
Ընդամենը	**45832**	**10625**	**35207**

ՀՀ Արարատի բջջային հեռախոսակապի ծառայություններ մատուցում են 3 օպերատորներ՝ <<ԱրմենՏել>>, <<ՎիվաՍելլ-ՄՏՍ> և <<Օրանժ-Արմենիա>> ՓԲԸ-ները: <<ԱրմենՏել>> ՓԲԸ Արարատի մարզում տեղակայված ավտոմատ հեռախոսակայանների միջոցով մատուցում են նաև ֆիքսված հեռախոսային ծառայություններ: Ֆիքսված հեռախոսակապի պահանջարկը բավարարված է՝ կայանների ընդհանուր ունակությունը կազմում է 130 000 հեռախոսահամար, ներկայում բաժանորդների քանակը կազմում է 26 100:

1.4. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ, ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

2014 թվականի ընթացքում ՀՀ Արարատի մարզում գտնվող միջպետական, հանրապետական, մարզային /տեղական/ և համայնքային նշանակության ավտոճանապարհներին ընդհանուր առմամբ

կատարվել է 8 մլրդ 780.527 մլն դրամի նորոգման, պահպանման և շահագործման աշխատանքներ, որից՝

ՀՀ պետական բյուջեի սեփական միջոցներով – 792.527 մլն դրամ

Ասիական զարգացման բանկի միջոցներով - 7մլրդ 740մլն դրամ

Համայնքային բյուջեների միջոցներով – 248.0 մլն դրամ

2014 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվել է՝ Հանրապետական և մարզային նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում – 147.0մլն դրամ, այդ թվում.

- Հ-8 <<Երևան-Արտաշատ-Այգավան-Մ-2>> հանրապետական նշանակության ավտոճանապարհի <<Ազատավան-Արտաշատ>> 1.5կմ ճանապարհահատված -105.0մլն դրամ
- Տ-2-42 <<Տ-2-38-Քաղցրաշեն-Նորաշեն>> մարզային նշանակության ավտոճանապարհի 0.3 կմ ճանապարհահատված – 17.5մլն դրամ
- Տ-2-35 <<Տ-2-30-Նորաշեն-Դվին>> մարզային նշանակության ավտոճանապարհի 0.3 կմ ճանապարհահատված – 24.5մլն դրամ

ՀՀ պահուստային ֆոնդից /5-րդ հրատապ ծրագրի շրջանակներում/ **– 329.792 մլն դրամ, այդ թվում.**

- Արմաշ համայնքի Նիկողոսյան փողոցի ասֆալտապատում – 18.692 մլն դրամ,
- Արարատ քաղաքի Աբովյան 1 նրբանցքի ասֆալտապատում – 23.023 մլն դրամ,
- Արարատ քաղաքի Պուշկյնի փողոցի ասֆալտապատում – 14.424 մլն դրամ,
- Արտաշատի Մարքսի 6 շենքի բակի ասֆալտապատում – 14.180 մլն դրամ,
- Ավշար համայնքի կենտրոնի և դպրոց տանող ճանապարհի ասֆալտապատում – 32.950 մլն դրամ:
- Ավշար համայանքի տրանսպորտային հանգույցի ճանապարհի վերանորոգման – 23.351 մլն դրամ
- Այգավան-Եղեգնավան ավտոճանապարհի ասֆալտապատում 42.637 մլն դրամ
- Մասիս գյուղական համաընքի դպրոց տանող ճանապարհի ասֆալտապատում – 19.222 մլն դրամ
- Մխչյան համայնքի մանկապարտեզ տանող փողոցի ացֆալտապատում – 23.759 մլն դրամ
- Նոյակերտ մարզային ավտոճանապարհի վերանորոգում – 37.511 մլն դրամ
- Վեդի-Գոռավան-Արարատ ավտոճանապարհի վերանորոգում – 16.930 մլն դրամ
- Ոսկետափ համայնքի դպրոցի ճանապարհի ասֆալտապատում – 18.691 մլն դրամ
- Արտաշատի ինտեգրված սոցիալական ծառայությունների համալիր կենտրոն տանող փողոցի վերանորոգում – 32.657 մլն դրամ
- Արտաշատի ինտեգրված սոցիալական ծառայությունների համալիր կենտրոնի հարակից բակերի և խաղահրապարակների վերանորոգում – 11.764 մլն դրամ

Ընթացիկ պահպանում և շահագործում՝ - 315.735 մլն դրամ, այդ թվում՝

- միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանում և շահագործում- 295.175 մլն. դրամ,

-Արարատի մարզային նշանակության ավտոճանապարհների պահպանում և շահագործում – 20.560 մլն դրամ:

<<Ասիական զարգացման բանկի>> միջոցներով – 7 մլրդ 740.0 մլն.դրամ՝

- Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Երևան – Արտաշատ՝ 19,6 կմ ճանապարհահատվածի հիմնանորոգում:

Համայնքային բյուջեների միջոցներով- 248.0 մլն դրամ:

Մարզի քաղաքային և համեմատաբար խիտ բնակեցված որոշ համայնքներում բնակչությունը հնարավորություն ունի բարձր որակով ընդունելու 8-12 հեռուստածրագիր, իսկ գյուղական բնակավայրերում՝ 1-6 հեռուստածրագրեր:

1.5. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2014 թվականին մարզում բերքատու պտղի և հատապտղի տարածությունը կազմել է 6810 հա, որը նախորդ տարվա համեմատ աճել է 66 հա-ով, իսկ բերքատու խաղողի տարածքը կազմել է 4951 հա, որը նախորդ տարվա համեմատ ավել է 24 հա-ով: Մարզում 2014 թ ընդհանուր ցանքատարածությունները կազմել են 22983 հա, նախորդ տարվա 21526 հա-ի դիմաց: Մարզում հացահատիկային մշակաբույսերի ցանքերը ավելացել են 1032 հա-ով, բանջարեղենինը 234 հա-ով, կարտոֆիլինը 1 հա-ով, բոստանինը 255 հա-ով, կերային մշակաբույսերինը 1 հա-ով, իսկ տեխնիկական մշակաբույսերինը /արևածաղիկ/ նվազել է 66 հա-ով: Ցուցանիշները աղյուսակում:

2013-2014թթ կատարված ցանքատարածությունները

№	ՄՇԱԿԱԲՈՒՅՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2013թ /հա/	2014թ /հա	Համեմատական 2014թ. 2013թ-ի նկատմամբ /հա/
1	Հացահատիկ և հատիկընդեղեն	5526	6558	+1032
2	Բանջարեղեն	6305	6539	+234
3	Կարտոֆիլ	781	782	+1
4	Բոստան	1515	1770	+255
5	Կերային կուլտուրաներ	6843	6844	+1
6	Տեխնիկական մշակաբույսեր	556	490	-66
7	Ընդամենը ցանքսեր	21526	22983	+1457
8	Պտուղ	7395	7416	+21
	որից՝ բերքատու	6744	6810	+66
9	Խաղող	5143	5083	-60
	որից՝ բերքատու	4927	4951	+24

2014թ բոլոր գյուղատնտեսական մշակաբույսերի գծով համախառն բերքի ցուցանիշները

№	Մշակաբույսի անվանումը	2014թ /տոննա/	2013թ /տոննա/	2013թ-2014թ-ի նկատմամբ /տոննա/
1	Հացահատիկ և հատիկաընդեղեն	30490	23220	+7270
2	Բանջարեղեն	340990	306184	+34806
3	Կարտոֆիլ	26045	24170	+1875
4	Բոստան	82099	65372	+16727
5	Կերային կուլտուրաներ	220015	201230	+18785
6	Պտուղ	70912	91806	-20894
7	Խաղող	112215	104326	+7889

2014թ մարզին հատկացվել է 3888.35 տ ազոտական պարարտանյութ, որից ներկրվել է 3628 տ, կալիումական պարարտանյութ՝ 326.2 տ , որից ներկրվել է 112.05 տ, ֆոսֆորական պարարտանյութ՝ 457.15 տ, որից ներկրվել է 126.45 տ:

2014թ պետական աջակցության ծրագրի շրջանակներում մարզին հատկացվել է 458850 լ դիզելային վառելիք, որից ներկրվել է 226498 լ:

Գարնանը համայնքների կողմից ներկայացրած հայտերի հիման վրա մարզ է ներկրվել 33850 կգ՝ գարու, 16095 կգ՝ առվույտի, 3500 կգ եգիպտացորենի սերմացու: 2014թ աշնանը մարզ է ներկրվել 75 տ աշնանացան ցորենի սերմացու: 2014թ մարզին հատկացվել է 180 կգ ցինկի-ֆոսֆիտ թունանյութ և կազմակերպվել է պայքար մկնանման կրծողների դեմ 1500 հա ցանքատարածություններում:

Մարզի 67 հատ հակակարկտային կայանքների աշխատանքների շնորհիվ կարկտահարության վնասները չնչին են եղել:

Արարատի մարզում պետական պատվերի շրջանակում 2012թ-ին կենդանիների հիվանդությունների դեմ կանխարգելիչ հակահամաճարակային միջոցառումներ են իրականացվել և ձեռք է բերվել շուրջ 39.7 մլն դրամ գումարի պատվաստանյութ

Արարատի մարզը իր բնատնտեսական ներուժով առաջատար դիրք է գրավում հանրապետությունում հատկապես ձկնաբուծության զարգացման առումով: Մարզում առկա է 157 ձկնաբուծական տնտեսություն, որից գործում է 134-ը: Հանրապետությունում տարեկան արտադրվող 5400 տոննա ապրանքային ձկան գրեթե 45 %-ը կամ մոտ 2400 տոննա արտադրվում է միայն Արարատի մարզում տեղակայված ձկնաբուծական տնտեսություններում:

Մարզի գյուղատնտեսության կարևոր ճյուղերից է անասնապահությունը: Մարզում կենտրոնացված է հանրապետության խոշոր եղջերավոր անասունների շուրջ 6.8 %-ը (46 376 գլուխ խոշոր եղջերավոր, որից՝ կովեր 17 721 գլուխ), ոչխարների և այծերի՝ գրեթե 12.9 %-ը (92 500 գլուխ) և խոզերի՝ 13.9 %-ը (19 434 գլուխ):

Մարզում 2014թ արտադրվել և իրացվել է շուրջ 11.8 հազար տոննա միս (կենդանի քաշով), 43.9 հազար տոննա կաթ և 60.6 մլն ձու:

01.01.2015թ դրությամբ մարզում առկա 1272 տրակտորներից գյուղատնտեսական աշխատանքներին պատրաստ են 1028-ը, 35 հացահատիկահավաք կոմբայներից՝ 31-ը, 20 կերհավաք կոմբայններից՝ 17-ը: Գյուղատնտեսական առկա տեխնիկան հիմնականում մաշված է, հիմնախնդիր է նոր տեխնիկայով համալրումը և առկա հավաքակազմի արդիականացումը:

1.6 ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

ՀՀ Արարատի մարզը հարուստ է շինարարական օգտակար հանածոների՝ տրավերտինի, կավերի, կրաքարի, ավազա-կոպճային խարնուրդի, օնեքսանման մարմարների, մարմարացված կրաքարերի և միկրոբրեկչաների, ինչպես նաև հանքային ջրերի 1 հանքավայրով /Արարատ/:

01.01.2015թ. դրությամբ մարզում հանքարդյունահանման լիցենզիաներ են տրվել 62 հանքավայրերի տեղամասերի համար, որոնք պատկանում են 57 տնտեսվարող սուբյեկտների, որոնցից շահագործվում են 34-ը, չեն շահագործվում 25-ը, իսկ 3-ը գտնվում են փաստաթղթերի ձևակերպման փուլում:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից օգտակար հանածոների շահագործման թույլտվություն է տրվել "ԵրևանՇին" ՍՊԸ-ին, իսկ երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն՝ "Էմել Մայնինգ", "Գարունիկ", "Մեդիս-Շին" և "Լիտոկոլ" ՍՊԸ-ներին ուսումնասիրման և երևակման նպատակներով համապատասխան լիցենզիաներ:

Ջրային պաշարների ռացիոնալ օգտագործման համար ՀՀ կառավարությունում մշակվել է "Տիրազուրկ և ապօրինի շահագործվող խորքային հորերի (այդ թվում ինքնաշատրվանող) ջրօգտագործման թույլտվությունների տրման, լուծարման և կոնսերվացման կարգը հաստատելու մասին" որոշման նախագիծ: Միաժամանակ հանձնարարվել է համայնքների ղեկավարներին միջոցներ ձեռնարկել խորքային հորերի ապօրինի հորատման դեպքերը բացառելու ուղղությամբ: Մարզի 9 համայնքներում լուծարվել է ապօրինի ձկնաբուծության նպատակով շահագործվող ինքնաշատրվանող 25 խորքային հորեր, 14 համայնքներում լուծարվել և կոնսերվացվել է 56 խորքային հորեր: Ներկայումս մարզի տարածքում առկա են շուրջ 1370 խորքային հորեր, որի

ջրառի ծավալը կազմում է 30520 լ/վ: Համայնքային պատկանելիության 599 խորքային հորերից առաջարկվել էր լուծարել 75 և կոնսերվացնել 81 խորքային հոր:

Ջրերի էկոլոգիական պահպանության առաջնահերթ խնդիրներից է կեղտաջրերի մաքրման և հեռացման աշխատանքների կազմակերպումը: Մարզում մաքրման կայանների բացակայության և կոյուղատարների վթարների հետևանքով կեղտաջրերը վերջնականապես հեռացվում են Արաքս գետ: Արտաշատի տարածքում ջրատարները (երկարությունը շուրջ 1130 կմ, կոյուղին 14 կմ) իրենց մաշվածության պատճառով բազմիցս վթարների են ենթարկվում, նորմալ չեն գործում կոյուղատարները՝ կեղտաջրերը լցվում են առվակները աղտոտելով շրջակա միջավայրը:

Մարզում բնապահպանական առումով խիստ պրոբլեմատիկ խնդիր է մնում թափոնների տարերայնորեն տեղադրման, անկանոն աղբահանության և աղբավայրերի ոչ կանոնակարգված ձևով օգտագործման հարցը: Մարզում կան 4 խոշոր աղբավայրեր, որոնք շահագործվում են Արտաշատ, Արարատ, Մասիս, Վեդի համայնքների կողմից, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 28 հա: Մասիսի տարածաշրջանի 13 համայնքներ օգտվում են Երևան քաղաքին հատկացված կենտրոնացված աղբավայրերից: Չարտոնագրված աղբավայրերից օգտվում են 9 գյուղական համայնքներ: Ներկայումս Մասիս քաղաքում չի գործում "Առողջապահության զարգացման կենտրոն" ՍՊԸ-ն: Առողջապահական հիմնարկները համագործակցում են "Էկոլոգիա Վ.Կ.Ն." ՍՊԸ բժշկական թափոններ վնասազերծելու լիցենզիա ունեցող կազմակերպության հետ: Վերացվել են 12 ապօրինի չհսկվող աղբավայրեր և այդ տարածքները վերցվել է հսկողության տակ:

Ըստ հողային հաշվեկշիռի ՀՀ-ում հատուկ պահպանվող տարածքների հողերը կազմում են 229.3 հազար հա, որից Արարատի մարզում 29136 հա (շուրջ 13%), որը բարձր է Հանրապետության միջինից: Արարատի մարզում ուսումնասիրությունների արդյունքում բացահայտել են բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգից դուրս մնացած կենսաբազմազանությամբ առավել հարուստ մի շարք «թեժ կետեր», որտեղ հանդիպում են մեծ քանակությամբ ՀՀ կարմիր գրքում գրանցված տեսակները:

<u>Մարզում հողերի պահպանության հիմնախնդիրներից կարևոր է համարվում հողերի դեգրեդացիայի կանխումը:</u> Հեղեղավտանգ, ջրածածկման ենթակա աղակալված հողատարածքները, որոնք դեգրեդացվում են հեշտությամբ և կորցնում վերականգման հատկությունը, կորցնում են նաև այդ տարածքներում առկա կենսաբազմազանությունը:

Հողերի դեգրեդացիային և կենսաբազմազանության կորստին նպաստում են նաև վաղ գարնանը անասուններին առանց հատկացված ճանապարհային ցանցի լեռնային արոտներ տեղափոխումը, արոտավայրերի գերծանրաբեռնվածությունը, չկանոնակարգված արածեցումը և այլն:

Ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից 2014թ մարզում 11 համայնքներում իրականացվել է 76 կմ երկարությամբ դրենաժների մաքրում՝ 112.55 մլն դրամ ընդհանուր արժողությամբ: Արաքս գետի հիմնահարցերի միջգերատեսչական խմբի հետ իրականացվել է գետի հունի վիճակի և հիդրոտեխնիկական կառուցվածքների առավել վտանգավոր տեղամասերում ուսումնասիրություններ՝ արգելաթմբերի կատարի բարձրացման նպատակով:

1.7. ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Հողաշինության և հողօգտագործման բնագավառում մարզպետարանի կողմից ուշադրություն է դարձվում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի օտարման և վարձակալության տրամադրման գործընթացին: Հողերի օտարման մեխանիզմների կատարելագործման, հողերի օտարումներից առաջացած ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման նպատակով, մարզպետարանի կողմից վերահսկողություն է իրականացվում աճուրդների անցկացման, հրապարակայնության ապահովման, մեկնարկային գների սահմանման և օտարումներից գոյացած միջոցները առաջնահերթության կարգով ուղղելու համայնքների քաղաքաշինական և հողաշինարարական ծրագրային փաստաթղթերի նախագծման և կազմման աշխատանքներին, ինչպես նաև համայնքների սոցիալական ծրագրերի իրականացման նպատակներով օգտագործելուն:

2014 թվականի ընթացքում մարզում օտարվել է շուրջ 222.3 հա տարբեր նպատակային նշանակության հողամասեր, որի արդյունքում ձևավորվել է շուրջ 163.9 մլն դրամ հասույթ:

2014թ. ընթացքում մարզի 5 համայնքների կողմից իրենց միջոցներով պատվիրվել է բնակավայրի գլխավոր հատակագիծ: Թվով 18 համայնքների կողմից սահմանված կարգով իրականացվում է բնակավայրի գլխավոր հատակագծի մշակման աշխատանքներ:

1.8. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

ՀՀ Արարատի մարզում գործում են 112 հանրակրթական, այդ թվում 5 ավագ դպրոցներ: Մարզի հանրակրթական դպրոցներում 2014-2015 ուսումնական տարում 30577 աշակերտներով կոմպլեկտավորվել են 1555 դասարաններ:

Մանկավարժական դրույքների թիվը 2203 է, մանկավարժական միջին դրույքաչափը՝ 100 825 դրամ: Դպրոցներում աշխատում են 2898 մանկավարժներ, որոնցից բարձրագույն կրթություն ունեն 98.5 %-ը: Ուսուցչական անձնակազմի հիմնական ծանրաբեռնվածությունը մարզում կազմում է 16.8 ժամ, աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունը՝ 10.5, դասարանների միջին խտությունը՝ 19.6 աշակերտ: 2014թ. վերապատրաստված 606 ուսուցիչներից ատեստավորվել են 600-ը:

Արտաշատ քաղաքի N1 և Նոր Խարբերդի N2 միջնակարգ և Արարատ քաղաքի N2 դպրոցներում իրականացվում է ներառական կրթություն: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 66 երեխաներ ընդգրկված են այդ ուսումնական հաստատություններում: Մարզի դպրոցներում կան 1271 համակարգիչներ, 937 համակարգչային սարքավորումներ, 116 համակարգչային դասարաններ:

Մարզի բոլոր դպրոցներն ապահովված են ինտերնետային կապով և ընդգրկված են հանրակրթական դպրոցների ինտերնետային ցանցում /ՀԴԻՑ/: Մարզի բոլոր դպրոցները ընդգրկված են <<Dasaran.am>> կրթական ծրագրում:

Մարզում գործող 98 նախադպրոցական ուսումնական հաստատություններում ընդգրկված են 7007 երեխաներ:

Մարմարաշեն և Այնթապ համայնքում կառուցվել են մանկապարտեզի նոր շենքեր:

1.9. ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Մարզում գործում են 71 մշակույթի տուն, 93 համայնքային գրադարան, 1 պետական դրամատիկական թատրոն, 1 մարզային գրադարան, 10 երաժշտական, 5 արվեստի և 3 գեղարվեստի դպրոցներ, 7 մարզադպրոց՝ որից 5 համայնքային ենթակայության և 2-ը՝ ՀՀ "Սևան" գյուղական մարզական ընկերության ենթակայության, 1 մարզական ակումբ, 1 շախմատի ակադեմիայի մասնաճյուղ, 2 թանգարան (Պ.Սևակի և Սպարապետ Վ.Սարգսյանի տուն-թանգարանները):

2014թ. հունիս–օգոստոս ամիսներին <<Արի տուն>> ծրագրի շրջանակներում մարզի քաղաքային և գյուղական համայնքներում 14-օրյա այցով հյուրընկալվել են 111 սփյուռքահայ պատանիներ:

Ասմունքի հանրապետական մանկապատանեկան 7-րդ մրցույթ-փառատոնում մարզի ներկայացուցիչը արժանացել է ''Գրան պրի'' մրցանակի, բարձր մակարդակով կազմակերպվել և անցկացվել է նաև ''Երգը բարեկամության կամուրջ է'' ռուսական երգի հանրապետական 2-րդ մրցույթ-փառատոնը, որտեղ մարզի ներկայացուցիչները արժանացել են դափնեկրի կոչման և մրցանակի:

Նշանակալի տեղ է հատկացվել զանգվածային միջոցառումներին՝<<Պարույր Սևակ-90>>, <<Թումանյան 145>>, <<Նվիրում Կոմիտաս վարդապետին>>, <<Վարդավառ>> միջոցառումներն, որոնք աչքի են ընկել իրենց մասսայականությամբ:

Մարզի տարբեր համայնքներում նշվել են մեծանուն բանաստեղծ Պարույր Սևակի, Սպարապետ Վազգեն Սարգսյանի, Գառզուի, Հովսեփ Օրբելու, Հովհաննես Թումանյանի և Կոմիտասի 145 ամյակները:

Մարզադպրոցներում մշտապես կազմակերպվում են մարզական միջոցառումներ՝ առաջնություններ, հուշամրցաշարեր և այլ մասսայական միջոցառումներ: Մեծ ուշադրություն է հատկացվում շախմատ մարզաձևին: Տարվա ընթացքում անցկացվում է երկու մարզային առաջնություն: Մարզում մշակութային և սպորտային ոլորտի հիմնախնդիրները կապված են մշակույթի տների, գրադարանների, թանգարանների, արվեստի, գեղարվեստի, սպորտ դպրոցների վերանորոգման, ջեռուցման և տեխնիկական վերազինման հետ:

Մարզում կա 106 մարզադահլիճ, 2 ստադիոն, 13 ֆուտբոլի խոտածածկ խաղադաշտ, 3 լողավազան, 2 հրաձգարան: ՀՀ Նախագահի մրցանակի համար անցկացվող <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթի հանրապետական փուլում Արարատի մարզը ընդհանուր մրցումներում գրավել է 7-րդ տեղը/ 10 մարզերի և Երևան քաղաքի համայնքները ներկայացնող թիմերից/, իսկ առանձին տարիքային խմբերում՝ 1-ին . 2-րդ, 3-րդ մրցանակային տեղեր:

Արարատի մարզում առկա բազմաթիվ բնական տեսարժան վայրերի և պատմամշակութային հուշարձանների շարքում առանձնահատուկ նշանակություն ունեն “Խոր Վիրապ” պատմաճարտարապետական համալիրը,”Սուրբ Կարապետ” վանքը, “Խոսրովի անտառարգելոցը”, Արաքս գետին հարող ջրաճահճային տարածքները, “Գոռավանի ավազներ” արգելավայրը և այն:

1.10. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Մարզի 260.1 հազար ազգաբնակչության բուժապրոֆիլակտիկ աշխատանքները իրականացվում են 4 բժշկական կենտրոնների, 1 առողջության կենտրոնի, 1 ծննդատան, 49 բժշկական ամբուլատորիաների և նրանց կազմի մեջ մտնող 44 բուժամանկաբարձական կետերի միջոցով, որտեղ աշխատում են 429 բժիշկներ, 1542 միջին և կրտսեր բուժաշխատողներ: 2014 թվականի ընթացքում ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատությունների այցելությունների թիվը կազմել է շուրջ 782 հազար, իսկ ստացիոնար բուժօգնություն են ստացել 16490 հիվանդ, որից վիրահատվել են 2541 հիվանդ: Առողջապահական հիմնարկների կողմից իրականացվել է 3 մլրդ 96 մլն դրամի պետական պատվեր, որը ֆինանսավորվել է 100%-ով: 2014 թվականին ՀՀ առողջապահության նախարարության կենտրոնացված գումարներով և ՀՀ պետական բյուջեից մարզին հատկացվել է 56 մլն դրամի դեղամիջոց, իսկ հումանիտար օգնությամբ՝ 27.6 մլն դրամի դեղորայք:

2014 թվականին պետական բյուջեից և դոնոր կազմակերպությունների աջակցությամբ իրականացվել է 61.7 մլն դրամի շինվերանորոգման աշխատանքներ: 2014 թվականին մարզի համայնքային բյուջեների միջոցներով առողջապահական ոլորտում իրականացվել են 35 մլն դրամի ներդրում/ Ղուկասավանի բուժամբուլատորիայի կառուցում:

2014 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ մարզի առողջապահական հիմնարկները ֆինանսական պարտքեր չունեն բացառությամբ <<Արտաշատի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն՝ 12 մլն դրամ և <<Մասիսի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն 27 մլն դրամ:

Սառեցվել է 630 միլիոն դրամի արժողության <<Արտաշատի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի հիմնական վերանորոգման աշխատանքները: Կատարված է 254.2 մլն դրամի շինվերանորոգման աշխատանքներ:

1.11. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

01.01.2015թ. դրությամբ մարզում բնակվում են 41 174 կենսաթոշակառուներ, 488 զոհված ազատամարտիների և զին. ծառայողների ընտանիքներ, 11 173 փախստական ընտանիքներ ընտանիքներ (1988-1994թթ. Ադրբեջանից բռնագաղթված և մարզում բնակություն հաստատած կարիքավոր փախստական ընտանիքների համար 2001-2007թթ. ընթացքում միջազգային կազմակերպությունների կողմից կառուցվել են 147 քոթեջներ և վերակառուցվել 4 բազմաբնակարան շենքեր (103 բնակարանով):

ՀՀ Արարատի մարզում խոցելի խմբերի թվաքանակի վիճակագրական տվյալները 2013 թվականի և 2014 թվականի կտրվածքով ներկայացված են աղյուսակում՝

Բովանդակություն	*Արտաշատ*	*Մասիս*	*Վեդի*	*ք.Արարատ*	*Ընդամենը մարզում*
ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը /2013թ.	2656	2555	23701	488	**8069**
ընտանեկան և սոցիալական նպաստ ստացող ընտանիքների թիվը /2014թ.	2720	2475	2342	480	**8017**
գրանցված գործազուրկների թիվը 2013թ.	687	745	475	663	**2570**
գրանցված գործազուրկների թիվը 2014թ.	1359	946	1102	1002	**4409**

1.12. ԱՌԵՎՏՈՒՐ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ

Ներկայում ՀՀ Արարատի մարզում գործում են 88 արտադրական ձեռնարկություններ և 1190 առևտրային կազմակերպություններ: Խոշոր արտադրական ձեռնարկություններից մարզի տնտեսության մեջ էական կշիռ ունեն «Արարատցեմենտ», «Վեդի-Ալկո», «Մասիս-Տոբակո», «Մասիս–տոբակ ինտերնեյշն», «Արտաշատ վինկոն», «Ավշարի օղու-կոնյակի», Արտաշատի և Արարատի պահածոների գործարանները, Զոդի ոսկու կորզման ֆաբրիկան և այլն:

Մարզում մանրածախ առևտրի շրջանառությունը 2014թ. կազմում է 28 մլրդ 732 մլն դրամ, այդ թվում՝ խանութների շրջանառությունը՝ 14 մլրդ 734 մլն դրամ, սպառողական ապրանքների շուկաների շրջանառությունը՝ 5մլրդ 454.0 մլն դրամ, գյուղարտադրանքի շուկաների շրջանառությունը՝ 365 մլն դրամ, կրպակների շրջանառությունը՝ 955 մլն դրամ և առևտրի այլ օբյեկտների շրջանառությունը՝ 6 մլրդ 224 մլն դրամ:

ՀՀ Արարատի մարզում գործում են 1190՝ նախորդ տարվա 1155-ի փոխարեն, առևտրային ձեռնարկություններ, այդ թվում 3 սպառողական ապրանքներ և 2 գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ: Մարզում սպառողական շուկան կայուն է: 2014թ. գյուղմթերք վերամշակող արտադրական ձեռնարկություններում ստեղծվել են 170 նոր աշխատատեղեր, որը 80-ով ավել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

2014 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ ՀՀ Արարատի մարզի զբաղվածության տարածքային կենտրոններում հաշվառված աշխատանք փնտրողները կազմում են 4790 մարդ, որոնցից գործազուրկների թիվը կազմում է 4409 մարդ: